

ՂԱՅԵՐԸ, ԽԵԹԵՐԸ ԵՎ ԳԵՐՄԱՆՆԵՐԸ

ՅՈՒ. Մ. ՎԱԲՐԻԵԼՅԱՆ

Չնայած գոյություն ունեցող մեծաթիվ ուսումնասիրություններին՝ հայերենի լեզվական առնչությունների, ինչպես նաև հնդեվրոպական լեզվակառուցվածքի հետ նրա փոխհարաբերության խնդիրները դեռ այժմեական են: Այսօր, առանձին հարակից հարցերի լուծմամբ պայմանավորված, հիշյալ խնդիրները, կարելի է ասել, ավելի են բարդացել, թեև դեռ Հ. Հյուբշմանից սկսած բազմաթիվ գիտնականներ լեզվական նյութի վերլուծության տարբեր սկզբունքների հիման վրա փորձել են ճշգրտել հայերենի բարբառային առանձնահատկություններն իր ցեղակիցների նկատմամբ, և այդ առումով կատարված է հսկայական աշխատանք: Հայերենի տարածքային կապերի բնութագրման հարցում այժմ էլ հիմնականում ընդունվում են Ա. Մելեի հայտնի դրույթները, թեև արդի հնդեվրոպաբանության մի շարք ներկայացուցիչներ, գործադրելով ուսումնասիրության նոր և ավելի կատարյալ մեթոդներ, վերանայել և ճշգրտել են հայերենի հիշյալ առանձնահատկությունները: Այդուհանդերձ, համապատասխան վերլուծությունների արդյունքները քիչ են տարբերվում Մելեի եզրակացություններից, ինչը բխում է հնդեվրոպական լեզվակառուցվածքի վերաբերյալ միևնույն պատկերացումներից: Այսինքն, ըստ հայերենի լուրահատկությունների, հաստատվում է նրա միջանկյալ դիրքը հ.ե. արևմտյան և արևելյան բարբառային խմբերի միջև և հայ-հունական ցեղակցական առավել սերտ կապը: Միևնույն ժամանակ առանձին լեզվաբաններ, ելնելով նաև հայերենի և հնդիրանական լեզուների միջև նկատվող ընդհանրություններից, առաջ են քաշում հայ-հունա-արիական լեզվատարածքի գոյության վերաբերյալ տեսակետը, թեև իրականում մի կողմից հայերենի ու հնդիրանական լեզուների և մյուս կողմից հունարենի ու հնդիրանական լեզուների միջև սահմանվող զուգաբանությունները թե՛ քանակական, թե՛ որակական առումով տարբերվում են հայ-հունականից: Տարածքային կապերի բնութագրման հարցում առանձին կարևորություն ունեն բառային զուգաբանությունները, և այս առումով հատկանշական են Գ. Զահուկյանի վերլուծությունները, որոնց համաձայն, ըստ հայերենի հետ ունեցած մերձավորության աստիճանի, հունարենին հաջորդում են իտալյան և գերմանական լեզուները¹: Հետևաբար փնելի է դառնում նաև այն հայտնի տեսակետը, որ առաջինը հ.ե. ընդհանրությունից դուրս են եկել հայերենը, հունարենը և հնդիրանական լեզուները՝ կազմելով միասնական լեզվատարածք: Նշենք նաև, որ այսօր արդեն եվրոպացի գիտնականների կողմից ևս լուրջ առարկություններ չի հանդիպում այն տեսակետը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը տարածված է եղել Փոքր Ասիայի հարավային և կենտրոնական շրջաններում, որտեղից էլ սկսվել է հ.ե. լեզուների կողմների գաղթը տարբեր ուղղություններով: Ընդ որում, հիշյալ ընդհանրությունից պետք է ավելի վաղ դուրս եկած լինեն եվրոպական լեզուների կողմները, ապա հնդիրանական ցեղերը շարժվել են դեպի արևելք, իսկ հայերը և փոքրասիական լեզուների կողմները կատարել են շատ փոքր տեղաշարժ: Ինչ վերաբերում է հույներին, ապա

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 203-204:

նրանք Բալկանյան թերակղզի են անցել եվրոպական լեզուներով խոսողներից ավելի ուշ, և այդ պատճառով էլ այս լեզուն հայերենի հետ ցուցաբերում է ավելի սերտ առնչություններ: Նկատի ունենալով, որ հիշյալ տեղաշարժերը տեղի են ունեցել աստիճանաբար՝ հազարամյակների ընթացքում, ուստի հայերենի լեզվական առնչությունների հարցը քննարկելիս չենք կարող սահմանափակվել միայն նրա և փոքրասիական լեզուների փոխադարձ կապերի բացահայտմամբ, քանի որ երկար ժամանակ այդպիսիք պահպանվում են նաև մյուս հ.ե. լեզուների հետ: Ավելացնենք, որ չենք կհսում Գամկրելիձե՛հ և Իվանովի այն կարծիքը, թե եվրոպական լեզուների կրողները իրենց ներկայիս բնակության վայրեր են տեղափոխվել Միջին Ասիայով և Կասպից ծովի հյուսիսային շրջաններով: Ավելի հավանական է թվում նրանց անցումը դեպի Եվրոպա Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելյան շրջաններով²: Ասվածը նշանակում է նաև, որ հիշյալ լեզուների կրողները հ.ե. միասնությունից դուրս գալուց հետո դեռ բավական ժամանակ բնակվել են Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան տարածքներում: Գոյություն ունեցող փաստարկներին փորձենք ավելացնել ևս մի քանիսը: Այդ առումով նշենք, որ գերմանական լեզուների համար ամենահին գրավոր հուշարձանը համարվում է հարավային Օտիրիայում (ներկայիս Սլովենիայում) հայտնաբերված մի սաղավարտի վրայի գրությունը, որը, ըստ մի շարք գիտնականների, գրված է հուսիսային էտրուսկերեն այբուբենով և վերծանվում է *hari-gasti teiwa* բառակապակցությամբ: Հ. Ռոզենֆելդի և Ե. Եվարցի կարծիքով, հիշյալ գրությունը ներկայացնում է սաղավարտի տիրոջ անունը՝ *hari* (հմմտ.՝ գոթ. *harjis* «գործ», գերմ. *Heer*), *gasti*- (հմմտ.՝ գոթ. *gasts* «հյուր») և *teiwa* (հմմտ. իսլանդ. *tivar* «աստվածներ», Կր. «աստված», հրգերմ. *Ziu*): Մ. թ. ա. 3-րդ դ. վերագրվող հիշյալ գրության մեջ Վ. Ժիրմունսկին տեսնում է հ.ե. բաղաձայնների գերմանական տեղաշարժը՝ հ.ե. *k>գերմ. h[X], գերմանական լեզուներին բնորոշ *a>o զարգացումը, *ei երկբարբառի պահպանումը, որը գոթական և վաղ ռունագիր արձանագրություններում արտացոլվում է որպես i, ինչպես նաև - i - և - a - հիմքակազմ ձայնավորների պահպանումը, սակայն բառավերջի գերմանական - r - ի բացակայությունը - *gasti* ձևում (հմմտ.՝ ռունագիր - *gastiR*)³:

Համեմատելով փաստերը՝ տեսնում ենք սակայն, որ այստեղ իրականում ունենք ոչ թե *a>o, այլ *o>a զարգացումը, և, բացի այդ, անհասկանալի է -*gasti* ձևի «հյուր» նշանակության դերը ամբողջ բառակապակցության մեջ, եթե նկատի ունենանք, որ (h)ari- արմատը հնդեվրոպական լեզուներում ունի «ուժեղ, քաջ, ուզմիկ» և այլ հարակից իմաստները: Այս առումով ասենք, որ մի շարք գիտնականների կարծիքով, հ.ե. միասնության վաղ շրջանում առանձնանում էին ուզմիկները, որոնք պաշտպանում էին ցեղը օտարներից և հողագործների սոցիալական խավերը: Է. Մակաևը գտնում է, որ *a'ra-, վեդ. *ārya* (հմմտ.՝ հ գերմ. *har-*, հայ. *ari*) անվանումը ոչ թե էթնիկական է, այլ սոցիալական⁴, հմմտ. նաև՝ ավեստ. *hairit* «պաշտպանել», *harətar* «պաշտպանող», հայ. *har-* «հարվածել, խփել», լատ. *servare* «փրկել»: Ինչ վերաբերում է հիշյալ -*gasti* ձևին, որտեղ բացակայում է սպասվող -r-ն, ապա այստեղ ենթադրում ենք հ.ե. մի շարք բարբառներին բնորոշ համարվող *H²>g և *-tt->-st-ի զարգացումները⁵, իսկ - i - ի առկայությունը խոսում է այն մասին, որ գործ ունենք -i հիմքով անվանական ձևի հետ: Այդպիսով հիշյալ ձևը հանգում է հնդեվրոպա-

² Տե՛ս Յու. Գարրիելյան, Հնդեվրոպական բաղաձայնների տեղաշարժը հայերենում և գերմանական լեզուներում, ԲԵՀ, 1990, 3:

³ Տե՛ս В. М. Жирмунский, Введение в сравнительно-историческое изучение германских языков, М.-Л., 1964, էջ 12-13:

⁴ Տե՛ս Э. А. Макаев, Общая теория сравнительного языкознания, М., 1977, էջ 31:

⁵ Տե՛ս М. Mayrhofer, Indogermanische Grammatik. Lautlehre, Heidelberg, 1984, էջ 117:

կան *H²att- արմատին⁶ «կարճ, փոքր, վատ, օտար, թշնամի» իմաստներով. հմմտ. լատ. *cado* «կտրել, ջարդել», գեղ. *hāiti* «հատված», խեթ. *-hatt-* «կարճ, կտրած», սնկ. *çāt-* «կտրված», հուն. *ερεπος* «մյուսը, օտար» (նաև *χηριος* «կարիք»), օսկ. *cadeis* «թշնամություն», հայ. *hat-* «կտրած, կարճ», *xēt*⁷ «ոխ, ատելություն» (հմմտ. նաև՝ *xayt*⁸ և *xat*⁹-ի «նվազել, թուլանալ»), հւլավ. *ga'd* «կարիք», հինգլ. *ja-hati* «թողնում է» և այլն: Հետևաբար, նշված արձանագրության ատաշին ձևը բարդություն է և արտահայտում է «թշնամուն հարվածող (հաղթող)» իմաստը: Անդրադառնալով *teiva* ձևին (նկատի ունենալով նաև հնդեվրոպական լեզուներին բնորոշ *w/r* հերթագայությունը)¹⁰ կարող ենք ասել, որ դրա համապատասխանությունը հայ. *tēr*, հուն. լատ. *-te'r* և մյուս ցեղակիցների նման կարծիքով այդ արձանագրությունը նշանակում է «պատերազմի աստված Տիրո»¹¹, իսկ մենք ավելի հավանական ենք գտնում «թշնամիներին հաղթող տեր» վերծանումը: Մինևույն ժամանակ հոռմեացիների կողմից (մ. թ. 38 թ.) հիշատակվում են հասերը կամ հեսերը (ըստ որի ունենք ներկայիս Հեսեսնի երկրամասը): Նկատի ունենալով գերմանական լեզուներին բնորոշ *ts* փոփոխությունը՝ ենթադրվում է, որ դրանք նույն խաթերն են: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ խաթ, խեթ, հաթ, հեթ ձևերը նույն ծագումն ունեն (որպես տարբեր բարբառային ձևեր), և վերոհիշյալ խաթերը նույն խեթերն են, որոնք նախապես տարածված են եղել Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան տարածքներում, իսկ հետագայում դրանց մի մասը տեղափոխվել է Եվրոպա: Այս ամենից հետևում է, որ հ.ե. միասնության քայքայումից հետո արևմտյան բարբառների մեծ մասը դեռևս գտնվում էր Փոքր Ասիայում և շփման մեջ էր իր մյուս ցեղակիցների հետ: Դա է վկայում նաև խեթական արձանագրություններում Հայասա երկրի հիշատակումը, որը մի շարք գիտնականների կարծիքով, հայերի բնօրրանն է եղել: Համեմատաբանները վաղուց են ապացուցել խեթերենի պատկանելությունը հ.ե. լեզվաընտանիքին, իսկ հայասերենի հարցը կարծես այնքան էլ պարզ չէ, քանի որ բացակայում են համապատասխան գրավոր ավանդությունները, և Հայասայի լեզվի մասին գաղափար են տալիս միայն հատուկ անունները: Վերջիններս, ինչպես գիտենք, լեզվի բառապաշարի անկախուն տարրեր են, որոնք, սակայն, այլ լեզուներում կարող են ստանալ այլ հնչյունական կերպարանք: Մանրամասնորեն վերլուծելով եղած փաստերը՝ Գ. Ջաֆուկյանը եզրակացնում է, որ հայասերենը հնդեվրոպական լեզու է և հայերենի հիմքը, ավելի ճիշտ՝ անցման օղակը հ.ե. լեզվից հայերենին¹²:

Այս ամենից կարելի է ենթադրել, որ հ.ե. միասնության քայքայումը սոցիալական հիմք ունի, երբ առաջանում են հակասություններ վերոհիշյալ երկու սոցիալական խավերի միջև, որի հիման վրա ունենում ենք «խեթ» և «(հ)արի» անվանումները: Այն, որ նշված հակասությունները իսկապես գոյություն են ունեցել և դեռ շարունակվել են երկար ժամանակ, հաստատում է նաև այն փաստը, որ, ըստ Տակիտոսի դիտարկումների, հարավից Միջին Եվրոպա տեղափոխված խաթերի և հարավային հերմինոնյան ցեղերի միջև եղել է դարավոր թշնամություն (հմմտ. հերմինոնյան բարբառներից եկող *Hass-* «թշնամություն, ատելություն» ձևը), և, որ խաթերը իրենց սովորություններով ու ապրելակերպով տարբերվում էին հերմինոններից¹³: Նույնը վերաբերում է խեթերի և հայասացիների միջև եղած հարաբերություններին: Այս առումով նշենք, որ *xet*¹⁴ - արմատը

⁶ Տե՛ս **M. Meier-Brüger**, *Indogermanische Sprachwissenschaft*, Berlin-New York, 2000, էջ 215:

⁷ Տե՛ս **P. Kretschmer**, *Die frühesten sprachlichen Spuren der Germanen*, "Zeitschrift für vergleichende Sprachforschung", 69, 1948:

⁸ Տե՛ս **Գ. Ջաֆուկյան**, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 339-340:

⁹ Տե՛ս **P. C. Tacitus**, *Germania*, Leipzig, 1976, էջ 43-47:

հայերենում ունի «ծուռ, վատ, թույլ» և այլ բացասական իմաստները (խեթերենում այդ իմաստները արտահայտվում են *harra-* ձևով), իսկ (*h*)*ar-*ը ընդհակառակը, միշտ հանդես է գալիս դրական իմաստներով: Հիշենք նաև, որ խեթերը ևս իրենց այդպես չեն անվանել, այլ՝ *nāšili* կամ *nēšumtilli*, իսկ «խեթ» անվանումը գալիս է եգիպտական աղբյուրներից: Ուշագրավ մի փաստ ևս. խեթական արձանագրություններում նրանց տեղաշարժերի վերաբերյալ ոչ մի վկայություն չկա, եթե համեմատելու լինենք Խորենացու կողմից հայերի հարավից գաղթելու տեղեկության հետ, ինչը խոսում է այն տեսակետի օգտին, որ «խեթ» անվանումը առաջացել է հ.ե. միասնության քայքայումից հետո միայն: Ինչ վերաբերում է ուրարտերենին, ապա ուրարտական տեքստերի հայկական բնույթի մասին խոսել են բազմաթիվ գիտնականներ, իսկ վերջերս նման մեկնաբանություններով հանդես է եկել նաև Գ. Ջահուկյանը¹⁰: Բոլոր այս փաստերից ելնելով՝ ենթադրում ենք, որ «Ուրարտու» անվանումը բխում է հնդեվրոպական *H²at- արմատից: Այն իսկապես հեշտ է հիմնավորվում, եթե նկատի ունենանք, որ աքքադական սեպագրերում (որոնք կիրառվում են նաև ուրարտական արձանագրություններում) գործածվում է URU դետերմինատիվը, որը, դրվելով տեղանուններից առաջ, նշանակում է «տեղ, վայր, քաղաք»¹¹: Դրան համապատասխան ունենում ենք ¹² Hatti «խեթերի վայր, քաղաք»¹², որը հնչյունական աննշան փոփոխություններով՝ որպես առաջին բաղադրիչի (դետերմինատիվի) իմաստատար նշանակության գիտակցման հետևանք, վերածվում է Urartu-ի: Ընդ որում, ուրարտացիների երկիրը ասուրները սկզբնապես կոչել են Uruašri կամ Uruašru, հետագայում՝ Urartu¹³: Ինչպես գիտենք, ուրարտացիները ևս իրենց երկիրը այդպես չէին անվանում, այլ՝ Biaynele, որը, ըստ Մ. Խաչիկյանի, կենդանի լեզվում պետք է հնչվեր Vyânelê¹⁴: Այսինքն՝ թե՛ «խեթեր» և թե՛ «ուրարտացիներ» անվանումները տրվում էին օտարների կողմից: Հայերենում այդ անվանումները որպես հատուկ անուններ չեն հիշատակվում և Ուրարտուի դիմաց ունենք Արարատ տեղանունը՝ արդեն մթազնված իմաստով (հմմտ. եբր. ¹⁵ *Ārârât*), իսկ ուրարտական տեքստերի հայկական բնույթի մասին ավելի որոշակի պատկերացում է տալիս Գ. Ջահուկյանի հիշյալ ուսումնասիրությունը: Վերադառնալով «խեթ» անվանմանը՝ նշենք, որ դեռ նախորդ դարի սկզբներին Հին Արևելքի խոշորագույն մասնագետ Բ. Տուրանը գտնում էր, որ այդ անվանումը պետք է դիտել պայմանական՝ նախնադարյան Հայաստանի հյուսիսում բնակվող ցեղերի համար, և խեթերի՝ որպես առանձին ժողովրդի առանձնացումը իրական չէ¹⁶: Ինչ վերաբերում է հայերի «արմեն» անվանմանը, որը օտար ծագում ունի և կապվում է մարապարսկական ընկալման հետ, կարծում ենք, որ այն նույնպես «օտար, թշնամի» իմաստից է բխում, եթե նկատի ունենանք հինդկ. *aryám*, *arim* «ընտանիքում օտար» և նման այլ ձևերը: Տվյալ դեպքում ելնում ենք նաև գոյություն ունեցող այն կարծիքից, որ հնդեվրոպական մի շարք բարբառներում վկայված ենք գտնում այնպիսի ձևեր, որտեղ -ո-ն հակառակ իմաստի արտահայտման ցուցիչ է¹⁶: Հետևաբար, հայերի «արմեն» անվանումը կարող էր առաջանալ հ.ե. միասնության քայքայումից հետո, երբ առանձնացել էին նաև հայկական և հնդիրանական ճյուղերը: Այդ շրջանում խեթերի մի մա-

¹⁰ Տե՛ս Գ. Ջահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, ՊԲՀ, 2000, 1:

¹¹ Տե՛ս *И. Фридрих*, Краткая грамматика хеттского языка, М., 1952, էջ 15:

¹² Իշենք նաև, որ Հաթերը բերդավանի անունով գոյություն է ունեցել Մեծ Հայքի Արցախ նահանգի Հաթերը կամ Խաթերը գավառը:

¹³ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, էջ 427:

¹⁴ Տե՛ս *М. Хачикян*, Хурритский и урартский языки, Ер., 1985, էջ 134:

¹⁵ Տե՛ս *В. Тураев*, К истории хеттского вопроса, С. - Петербург, 1900, էջ 1:

¹⁶ Տե՛ս *J. Haudry*, L'indo-européen, Paris, 1979, էջ 51:

սը հ.ե. մյուս լեզուների կրողների հետ ամենայն հավանականությամբ տեղափոխվում է Եփրոպա, իսկ մյուս մասը ձուլվում է տեղում մնացած հնդեփրոպական (հնարավոր է նաև ոչ հնդեփրոպական) ցեղերի հետ:

Անդրադարձալով հայերի «հայ» ինքնանվան հարցին և էլենելով մինչ այժմ գոյություն ունեցող հիմնական տեսակետներից՝ առավել հավանական ենք համարում *(H)ar->haj զարգացումը, որի հիմքում «ուժեղ, քաջ» և այլ հարակից իմաստներն են: Նկատի ունենալով նաև, որ տիպաբանորեն չի բացառվում *Hat(t)->haj անցումը ևս (ինչը պնդում են մի շարք գիտնականներ), չենք կարծում սակայն, թե որևէ ժողովուրդ իր ինքնանվանման համար կարող է գործածել բացասական իմաստներ արտահայտող ձև, ինչպիսին հիշյալ *Hat(t)-ն է: Բացի այդ, հայերենի բարբառային փաստերի հիման վրա r>j անցումը իրական է թվում այն առումով, որ «հայ» ինքնանվանումը նախապես կարող էր առաջանալ միայն առանձին բարբառներում:

Լեզվաբանները վաղուց հետաքրքրվել են նաև խուրի-ուրարտական կապերով: Նշենք, որ «խուրի» կամ «խարրի» անվանումը հիշատակվում է խեթական արձանագրություններում, որտեղ, ինչպես տեսանք, վկայվում է harrā-«վատ, օտար» ձևը, որի կողքին ունենք ներկա եզ. 3-րդ դ. harrāi «շարդում է, վնասում է» և դերբայական harran ձևերը: Գ. Ղափանցյանը դրանք համեմատում է հայերենի xōr «պակասավոր, թերի, ծակ» ձևի հետ, որը Հ. Աճառյանը համարում է սեմական փոխառություն՝ նկատի ունենալով արամ. xōrā, ասոր. xurā «ծակ», ասոր. hurru «ծակ, խոռոչ», եբր. xōr, xūr «ծակ»: Տվյալ դեպքում, կարծում ենք, որ իրավացի է Աճառյանը, քանի որ, ինչպես վերը տեսանք, (h)ari- արմատը՝ իր լծորդություններով հանդերձ, հայերենում ունենում է հակառակ (դրական) իմաստ:

Այսպիսով, եթե ուրարտերենը դիտում ենք հին հայերենի ավելի վաղ վիճակ, ապա այդպիսին պետք է համարվի նաև խուրիերենը, քանի որ շատ դեպքերում ուրարտերենը և խուրիերենը դասվում են միևնույն լեզվաընտանիքին: Մյուս կողմից, սակայն, չկան գորավոր հիմքեր հայերենը և խուրիերենը թեկուզ միևնույն լեզվի տարբեր բարբառները համարելու համար: Գ. Ջահուկյանը իր ավելի վաղ ուսումնասիրություններում այս հարցի լուծումը տեսնում էր հեռավոր ցեղակցության մեջ, որը ինչ-որ չափով հաշտեցնում էր գոյություն ունեցող հակադիր տեսակետները, երբ հիշյալ լեզուները հատկացվում էին մե՛րթ հրե-դեփրոպական, մե՛րթ կովկասյան լեզվաընտանիքներից կամ էլ դիտվում էին որպես առանձին լեզվաընտանիք: Այժմ, երբ լեզվաբանը ուրարտական արձանագրությունները համարում է հայերենի հնագույն գրավոր վկայություններ, իրավիճակը փոխվում է, և անորոշ է մնում խուրիերենի հարցը: Ըստ Ղափանցյանի վերլուծությունների, խուրիերենի և հայերենի ընդհանրությունները բառամթերքից այն կողմ չեն անցնում, ինչը չի կարելի ասել, սակայն, հայերենի և ուրարտերենի մասին, որոնց միջև ունենք բազմաթիվ հնչյունական, ձևաբանական և քերականական ընդհանրություններ, որոնք բացահայտված են Ղափանցյանի, Ջահուկյանի և մի շարք այլ լեզվաբանների կողմից: Կարևոր ենք համարում նաև Մ. Խաչիկյանի եզրակացությունները խուրիերենի և ուրարտերենի շարահյուսական կառուցվածքների յուրահատկությունների վերաբերյալ: Նա գտնում է, որ եթե ուրարտերենը ցուցաբերում է հնդեփրոպական լեզուներից բնորոշ նոմինատիվ կառուցվածք, ապա խուրիերենը բնութագրվում է որպես էրգատիվ կառուցվածքի լեզու¹⁷:

Նկատի ունենալով նաև այն փաստը, որ խուրիերենը Միտանի արիական պետության հիմնական լեզուն է եղել, կարող ենք եզրակացնել, որ խուրի-ուրարտական ընդհանրությունը ըստ էության արտացոլում է հայ-արիական ընդ-

¹⁷ Տե՛ս Մ. Խաչիկյան, Առաջավոր Ասիայի հին լեզուների՝ խուրիերենի, ուրարտերենի, էլամերենի տիպաբանական ուսումնասիրության հիմնախնդիրները (ստե՛նախտություն), Եր., 1999:

հանուր բարբառային վիճակը իր քայքայման փուլում: Վերջինս պետք է առաջացած լիներ այն ժամանակ, երբ հ.ե. արևմտյան խմբի լեզուները արդեն դուրս եկած լինեին հ.ե. միասնությունից: Մ. Խաչիկյանի վերոհիշյալ եզրակացություններից հետևում է, որ այդ շրջանում խոռիերենը պետք է առավելապես կրած լիներ ոչ հնդեվրոպական (ամենայն հավանականությամբ՝ սեմական) լեզուների ազդեցությունը՝ հետագայում իր տեղը զիջելով դրանց, իսկ ուրարտեները ընդհակառակը՝ դուրս է գալիս այդ ազդեցության ոլորտից և զարգանում է որպես հին հայերեն:

Ю. М. ГАБРИЕЛЯН - *Армяне, хетты и германцы.* - Статья посвящена одной из актуальных проблем современной индоевропеистики: взаимоотношению армянского, хеттского и германских языков. Путем анализа новых языковых данных автор обосновывает ранее существующие положения о возникновении хеттов в результате социального расслоения индоевропейского общества и об условности обозначения „хетты” применительно к северной группе обитателей первобытной Армении. Одновременно выдвигается гипотеза, что хурритско-урартское единство на самом деле отражает армяно-арийское диалектное состояние после распада индоевропейского общества.